

Արձանագրություն N 162

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ-ի
մայիսի 31 -ի նիստի
Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի առկա ուսուցման ասպիրանտների ատեստացիայի հարցը /զեկ.՝ Խ. Գալստյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ գիտ. քարտուղար, դոցենտ Խ. Գալստյան/:
3. Աշխատությունների տպագրության երաշխավորության հարցը /զեկ.՝ Խ. Գալստյան/:
4. Ընթացիկ հարցեր. ա/ 2017-2018 ուստարվա ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիմորդների մասին/ զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/
բ/ Քննական տեղեկագրում գնահատականներ անցկացնելու կարգի մասին/ զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:

Խորհուրդը որոշեց.

1. Ատեստավորել ԵՊՀ Քաղաքական գործընթացների և ինստիտուտների ամբիոնի առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ **Մհեր Հակոբյանին**, 1-ին տարվա ասպիրանտ **Հայկ Սարգսյանին**, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ **Սերգեյ Բաղդասարյանին**, 2-րդ տարվա ասպիրանտ **Դավիթ Սարկիսյանին**, 2-րդ տարվա ասպիրանտ **Էրիկ Դավթյանին**:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հայցորդ **Մերի Մովսիսյան՝ «Ժողովրդավարացման միտումները ՀՀ կառավարման ձևերի փոփոխման համատեքստում»**, ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարովին:
բ/ ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ **Նարինե Մեսրոպի Մարգարյան՝ «Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականության հայեցակարգային հիմքերը»**, ԻԳ.00.02 «Քաղաքական գիտություններ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին:
3. Երաշխավորել հրատարակության
ա/ ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասիստենտ Մ. Ալիխանյանի «Քաղաքական իմիջ» դասընթացի ծրագիրը:

բ/ ԵՊՀ Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ Ա. Աբրահամյանի «Անգլիախոս երկրների երկրագիտություն» ուսումնական ձեռնարկը:

4. Հանձրարարել ամբիոնի վարիչներին համապատասխան ամբիոններում կազմակերպել քննարկումներ և դասախոսական անձնակազմին իրազեկել քննական տեղեկագրում գնահատականներ անցկացնելու և սովորողին՝ իր ստացած գնահատականի մասին իրազեկելու նոր կարգի մասին:

*ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի դեկան, Գիտական խորհրդի
նախագահ, պրոֆ.*

Գ. Պետրոսյան

*ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
Ֆակուլտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.*

Խ. Գալստյան